«ԵՐԵՎԱՆԻ Լ.ԵՈՒ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ Հասարակագիտություն

Մասնակից՝ Անահիտ Գալստյան

Ղեկավար՝ Սաֆարյան Արմինե

Թեմա՝ «Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը»:

Երևան-2023

Բովանդակություն

1. Ներածություն —----------էջ-2-4
2. Հիմնական մաս—----------էջ -5-13
3. Եզրակացություն—----------էջ14
4. Օգտագործված գրականության ցանկ—----------էջ 15

Ներածություն

**«Երեխայի ուսուցման նպատակն է , որ դարձնես
նրան ունակ զարգանալու առանց ուսուցչի»:
Է.Հաբբարդ**

Համաձայն Սալամանկայի հռչակագրի՝ /ՅՈՒՆԵՍԿՕ, 1994թ./

. յուրաքանչյուր երեխա ունի կրթության հիմնական իրավունք և պետք է հնարավորություն ունենա ստանալ և հասնել գիտելիքների տանելի մակարդակի,

. յուրաքնչյուր երեխա ունի անկրկնելի առանձնահատկություններ , հետաքրքրություններ, ընդունակություններ և ուսումնական կարիքներ,

. հարկ է մշակել կրթության համակարգեր և իրականացնել կրթական ծրագրերն այնպես , որպեսզի հնարավոր լինի ուշադրություն դարձնել այդ առանձնահատկությունների և պահանջմունքների լայն բազմազանությանը:

ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին » կոնվեցիայի դրույթների վերաբերյալ խոսելիս կրթության իրավունքի դրույթը համառոտ ձևակերպվում է այսպես.«Յուրաքանչյուր երեխա ունի որակյալ կրթություն ստանալու իրավունք»:Այդ Կոնվենցիայի 29-րդ հոդվածում մասնավորապես ասվում է.«Մասնակից պետությունները համակարծիք են , որ երեխայի կրթությունը պետք է ուղղված լինի երեխայի անհատականության , տաղանդի և մտավոր ու ֆիզիկական ունակությունների զարգացմանը՝ դրանց լրիվ ծավալով»:

Արժեքահեն և իրավագիտակից հասարակության ձևավորման հիմնասյուներից կարևորագույնը որակյալ կրթությունն է:Կրթության մատչելիությունն ու հասանելիությունը հասարակության զարգացման առաջընթացի հիմնական միջոցն է:

Դասն ուսուցչի ստեղծագործությունն է, որը հիմնվում է մի կողմից ուսուցման հոգեմանկավարժական օրինաչափությունների վրա, մյուս՝ կողմից կրթական չափորոշիչների ներկայացրած պահանջների:Այն ուսուցչի մասնագիտական , մեթոդական, կազմակերպական, պլանավորման, ախտորոշման, նախագծման, կանխատեսման և այլ գործառույթների ներդաշնակ միասնությունն է:Այն միտված է նաև ինչպես սովորողների մտավոր ընդունակությունների, քննադատական

մտածողության զարգացմանը, ձեռք բերած գիտելիքների իմաստավորումը և գործնականում կիրառումը, այնպես էլ դաստիարակչական որակների ու աշխարհայացքի ձևավորմանը:

Այսօր մենք ապրում ենք այնպիսի իրականության մեջ, որտեղ ուսուցման գործընթացում փոփոխություններ են արձանագրվում ամեն ժամ, ամեն րոպե:Եվ այդ փոփոխություններն իրականացնողը միանշանակ ուսուցիչն է, ում ուսերին է ընկած ողջ ծանրությունը:

Հետազոտական իմ աշխատանքի թեման է «Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը»: Թեմայի ընտրությունն իմ կողմից պատահական չէ, այո, ուսումնառության ընթացքում շատ կարևոր է ուսուցչի կողմից երեխաների կրթական կարիքների բացահայտումը:Եթե ուսուցիչը ստեղծագործաբար է մոտենում իր աշխատանքին, ապա լավ արդյունքն անխուսափելի է: Կրթությունը բազմաշերտ գործընթաց է, քանի որ այն ներառում է ինչպես սովորողների՝ անհատական կարիքների բացահայտում, այնպես էլ սովորողների կողմից գիտելիքների յուրացման գործոններ: Այս գործընթացում մասնակիցներից յուրաքանչյուրը հանդես է գալիս իր նպատակային գործառույթներով, և միայն դրանց ճիշտ համադրության պայմաններում հնարավոր է կրթության գործընթացի ճիշտ և նպատակային կազմակերպումը, ինչպես նաև որակի ապահովումը:

Կրթության որակը կրթության համապատասխանությունն է /որպես արդյունքի, որպես գործընթացի, որպես սոցիալական համակարգի/ անհատի,

հասարակության, պետության բազմաբնույթ պահանջմունքների և շահերին:Այն ցույց է տալիս հասարակության մեջ կրթության գործընթացի վիճակն ու արդյունավետությունը, նրա համապատասխանությունը հասարակության պահանջներին:

Քաղաքացիական հասարակության կայացման գործում կարևոր դեր ունի Հասարակագիտություն առարկան, քանի որ այն կարողանում է երեխաների մեջ դաստիարակել քաղաքացիական հասարակության կայացման համար անհրաժեշտ ակտիվ քաղաքացուն բնորոշ հատկանիշներ՝ սեփական իրավունքների և պարտականությունների գիտակցում, պետության և օրինականության հարգում, հավատ սեփական ուժերի և հնարավորությունների նկատմամբ, որոնց շնորհիվ կարող են փոփոխել և զարգացնել աշխարհը:Այս ամենը հնարավոր են միայն դասապրոցեսին ճիշտ և համակողմանի մոտենալու

արդյունքում: Իսկ այստեղ կարևոր է երեխայի կրթական կարիքների բացահայտումը:Ինչպե՞ս բացահայտել այդ կարիքները, ի՞նչ մեթոդներ օգտագործել. այս բոլոր հարցերին կփորձեմ պատասխանել իմ աշխատանքում:Այս աշխատանքը գրելիս հաշվի եմ առել նաև դասավանդման իմ անձնական փորձը:

Հիմնական մաս

Հասարակագիտության կրթական ներուժը ժամանակակից աշխարհում ամենուրեք կարևորվում է կրթական գործընթացի հումանիզացման պահանջը:
Այսօր տեղի ունեցող ժողովրդավարացման գործընթացները պահանջում են քաղաքացիական այնպիսի որակների դաստիարակում , ինչպիսիք են սեփական իրավունքների ու պարտականությունների գիտակցումն ու իրականացումը:

Հիմնական դպրոցի կարևոր խնդիրներից մեկն է նաև սեր և հարգանք սերմանել դեպի պետությունը, քանի որ վերջին ժամանակների դեպքերը ցույց տվեցին, որ հարգանքը դեպի սեփական պետություն բավականին ցածր է: Սովորողները պետք է հասկանան, որ առանց պետականության ժողովրդի գոյությունը և ապագան վտանգված են:Կարևոր է նաև, որ այդ պետության ներսում ժողովուրդը լինի քաղաքականապես զարգացած:

Հասարակագիտության դասերը մեծ հնարավորություն են տալիս սովորողներին՝ ձևավորելու ազգային գիտակցություն ու մտածողություն, դաստիարակվել որպես ապագայի հասուն քաղաքացիներ:

Այսօր Հասարակագիտություն դասավանդող ուսուցիչների խնդիրն է դարձել յուրաքանչյուր հարց քննարկել և ներկայացնել յուրովի:21-րդ դարի աշակերտները կարողանում են տարբեր խնդիրներ մեկնաբանել տարբեր տեսանկյուններից: Հաճախ, դասի ժամանակ լսում ենք այնպիսի պատասխաններ, որոնց մասին չէինք էլ մտածել:

Կրթությունը անձի որակական հատկանիշ է: Սովորել ցանկանալը և սովորել կարողանալը եղել և մնում են որպես կրթության գերխնդիրներ: Դրանց իրականացումը հնարավոր է միայն աշխատանքների ճիշտ պլանավորումով:

Ուսուցչի առջև խնդիր է դրված՝ ոչ թե դասն անգիր սովորեցնել մանրամասնություններով, այլև վերհանել դասի կարևոր խնդիրները, մեկնաբանել և ցույց տալ դրանց լուծման ճանապարհները:

«Մեր ժամանակների ուսուցիչը ոչ միայն պետք է ունենա հարուստ գիտելիքներ, համակողմանի զարգացվածություն և լայն մտահորիզոն, այլև կարողանա իր ունեցածը

դարձնել սովորողների սեփականությունը, անընդհատ հարստացնի նրանց գիտելիքները, կարողությունները և հմտությունները:Այս հիմնախնդիրը կարելի է լուծել ուսուցման և դաստիարակության գործընթացները կատարելագործելու, նոր մեթոդներ

հայտնագործելու, հինը վերանայելու, դրանք կիրառելիս նորին զուգակցելու, ուսուցման տեխնիկական միջոցները լայնորեն օգտագործելու միջոցով»:

Դասի արդյունավետությունը պայմանավորված է բազմաթիվ գործոններով , որոնք պետք է խորապես հաշվի առնել , որպեսզի ուսումնական գործընթացում առավելագույնս արդյունավետ իրականացվի յուրաքանչյուր աշակերտի հոգեմտավոր զարգացումը, գործնական կարողություններն ու հմտությունները:

Դասի արդյունավետությունը պայմանավորված է նաև նրանով, թե որքանով է ուսուցիչը վերլուծում իր գործունեությունը:Դա իրականանում է մի քանի մակարդակներում՝ հուզական, մեթոդական, գնահատողական:Կարևոր գործոն են նաև սովորողների՝ դասին ներգրավվածությունը, ակտիվությունը դասի տարբեր փուլերում, վարքի, խոսքի մշակույթը, ինքնուրույնությունը, ուշադրությունը, աշխատանքի մի ձևից մյուս ձևին անցնելու ճկունությունը, գործնական կարողությունների հմտությունը:

Կրթության մեջ երեխաների հետ կապված դժվարությունները կարող են շատ տարբեր լինել:Երեխաները կարող են դժվարանալ կարդալիս, մտածելիս, շրջապատող մարդկանց հետ շփվելիս, հաղորդակցվելու հետ կապված դժվարանալ: Դժվարությունները կարելի է դասակարգել նաև ըստ դրանց տևողության ժամանակահատվածի, այսինք դժվարությունները կարող են լինել ժամանակավոր, երկարատև, մշտական:

Ուսուցչի հմտությունն է դրանք արագ բացահայտել, ընդ որում յուրաքանչյուր աշակերտի կտրվածքով, այսինքն ուսուցիչը պետք է բացահայտի յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքը, օգնել նրան հաղթահարելու այդ խնդիրները: Ցավոք, ամեն մարդ չէ, որ կարողանում է գիտակցել իր կարողությունները:Շատ բան կախված է նաև ընտանիքից,: Իր երեխայի կրթության որակով պետք է շահագրգիռ լինի նաև ծնողը: Ծնողը պետք է ավելի մտահոգվի, թե դպրոցում ինչ է սովորել իր երեխան:

Այս պարագայում, ես, որպես ուսուցիչ, կարևորում եմ «Ուսուցիչ-ծնող» կապը, որտեղ միայն համատեղ աշխատանքով կարելի է հասնել ցանկալի արդյունքի:Ծնողը ուսուցչի մեջ պետք է գտնի գործընկերոջ, մի մարդու, ով կարող է իրեն օգնել իր երեխայի

տարբեր կրթական կարիքների բացահայտման գործում, այսինքն ծնողը պետք է անվերապահորեն վստահի ուսուցչին, միայն այս դեպքում ուսուցիչը կարող է ճիշտ«ախտորոշել» երեխայի կրթական կարիքները:

Դասապրոցեսը կազմակերպելուց առաջ անհրաժեշտ է ճանաչել աշակերտներին, հասկանալ նրանց հետաքրքրությունները և փոքր-ինչ օգնություն գործի դնելով հնարը կամ մեթոդը համապատասխանեցնել երեխաների նախասիրություններին:

Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան պահանջում է տարբեր մոտեցումներ, այսինքն մի դասարանում աշխատող մոտեցումը կարող է նույն արդյունքը չտալ մյուսում:Հետևաբար ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես

գործիքներ, որոնց կիրառման արդյունավետության մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:

Ուսուցման ընթացքում ցանկալի արդյունքի հասնելու համար անհրաժեշտ եմ համարում կիրառել բազմաբնույթ և հիմնարար մեթոդական հնարներ ու մոտեցումներ:Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է կատարի իր առարկայի համար մատուցվող նյութի տրոհում բազային և հիմնական հատվածների, ինչպես նաև, հայթհայթի լրացուցիչ տեղեկույթ և այն տրամադրի իր դասարանի այն աշակերտներին, ովքեր ունեն դրա կարիքը կամ առավել հետաքրքրված են:

Ուսումնական գործընթացի կազմակերպման կարևորագույն խնդիրներից է սովորողների լիարժեք ներգրավվածությունը դասապրոցեսում:Ուսուցիչը պարտավոր է սովորողներին բացատրել նրանց առկա խնդիրները և ուսումնառության գործընթացը հարմարեցնելու նրանց հնարավորություններին:

Անհրաժեշտ է յուրաքանչյուր սովորողի համար ուսուցման գործընթացում ապահովել ակտիվ ուսումնական գործունեություն, որի շնորհիվ աշակերտը կգերազանցի իր կարողությունները, կյուրացնի անհրաժեշտ գիտելիքներ, ինչպես նաև ուսումնական գործընթացը կազմակերպել այնպես, որ այն արդյունավետ լինի յուրաքանչյուր սովորողի համար և համահունչ լինի նրա ուսումնառության տեմպին:Գործընթացում ցանկալի արդյունքները պայմանավորված են ոչ միայն ուսուցանողի, այլ նաև սովորողների որակներով:

Եթե աշակերտը իր ընկալունակությամբ, աշխատասիրությամբ, բնատուր օժտվածությամբ տարբերվում է դասարանի մյուս աշակերտներից, նա կարող է

ժամանակի ընթացքում կորցնել իր հետաքրքրությունը տվյալ առարկայի նկատմամբ, եթե վերջինիս մատուցման ժամանակ նա իր համար չգտնի նոր նյութի այն չափաբաժինը, որը կհագեցնի նրա մտքի ծարավը, իսկ նրանք, ովքեր առավել թույլ են, ծույլ կամ ունեն վատ հիշողություն, վատ տրամաբանություն, անհետևողական են, կարող են ետ մնալ ընդհանուր խմբից և կրկին կորցնել տվյալ առարկայի նկատմամբ իր հետաքրքրությունը:

Ուսումնական գործընթացի կազմակերպման կարևորագույն խնդիրներից է սովորողների լիարժեք ներգրավվածությունը դասապրոցեսում:Ուսուցիչը պարտավոր է սովորողներին բացատրել նրանց առկա խնդիրները և ուսումնառության գործընթացը հարմարեցնելու նրանց հնարավորություններին

առանձնահատկությունները, ուսումնառության տեմպը, գիտելիքների յուրացման հաջորդականության տրամաբանությունը:

Որևէ մեթոդ կիրառելուց առաջ անհրաժեշտ եմ համարում ճանաչել երեխաներին, նրանց ընդունակությունները, հնարավորությունները և առանձնահատկությունները, տվյալ պահին յուրաքանչյուր սովորողի առկա գիտելիքների պաշարը:

Եթե այս հանգամանքը միշտ հիշենք, ապա ուսումնական գործընթացը կարող ենք կազմակերպել բոլորի համար անհատական մոտեցման սկզբունքից ելնելով, որն էլ հնարավորություն կտա յուրաքանչյուր երեխայի ընդգրկել դասապրոցեսի մեջ:

Միևնույն դասարանում սովորող աշակերտները միմյանցից տարբերվում են իրենց կրթական կարիքներով. գիտելիքների պաշարով, դրանք յուրացնելու պատրաստակամությամբ, աշխատանքի տեմպով, կարողունակություններով, հիշելու արագությամբ, դիտողականությամբ, աշխատասիրությամբ,ուշադրության կենտրոնացմամբ:Ուշադրության կենտրոնացումը սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլն է :

Երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը , ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության մեջ:Մարդու կարճաժամկետ հիշողության հնարավորությունները սահմանափակ են, այսինքն՝ մարդը չի կարող միանգամից շատ բան սովորել:Ըստ գիտնականների մարդը կարող է միանգամից սովորել առավելագույն դեպքում 9-10 նոր բան:Որոշ գիտնականներ ավելի հոռետես են և համարում են, որ մարդը կարող է սովորել 4-5 նոր բան:

Այս հանգամանքը շատ կարևոր է, քանի որ մեր դասագրքերում դասերի ժամանակ հաճախ ականատես ենք լինում իրավիճակների, երբ կարճ ժամանակում աշակերտներին փոխանցվում են մի քանի տասնյակ նոր անուններ, տերմիններ ու հասկացություններ:

Իսկ ինչ կարելի է անել, որ հնարավորինս շատ բան սովորեն աշակերտները

Եթե ուսուցչի կողմից չկատարվի կրթական կարիքի բացահայտում, ապա երեխաների մոտ կձևավորվի կրթության նկատմամբ անտարբերություն, անորոշություն, ձանձրույթ, սեփական ուժերի նկատմամբ անվստահություն:

Սովորողը երբեմն հաջողության հասնելու համար ստիպված է լինում գտնել այլ ճանապարհներ: Օրինակ, արտագրել ընկերոջից կամ օգտվել այդ պահին արգելված տեխնիկական միջոցներից, ուղղակի գուշակել պատասխանը:

Այս ճանապարհով ձեռք բերված գիտելիքները լիարժեք չեն, հիմնավոր չեն, ուսումնական աշխատանքն էլ հաճույք չի պատճառում սովորողին:Չի կարելի թույլ տալ, որ նրանք ուսումնական առաջադրանքները կատարեն հարկադրաբար կամ պատժից վախենալով:

Աշակերտների բազմաթիվ բացասական հատկանիշներ հեշտությամբ կարելի է հաղթահարել, եթե ժամանակին միջոցներ ձեռք առնվեն. դիտարկում, տարբերակված մոտեցում, քաջալերում, սեփական անձի կարևորում: Որպեսզի աշակերտներն ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու , կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռնվեն:Ընդ որում՝ դա պետք է արվի կանոնավոր 9և շարունակական ձևով:Այլ կերպ ասած, պետք է կարևորել ոչ միայն ուսումնական ծրագրի ընդգրկումը, այլև խորությունը:

Վերջին տարիներին շատ մարդիկ փորձում են գիտելիքն ու մտածողությունը հակադրել իրար: Հաճախ ենք լսում արտահայտություններ, որ Google-ն ամեն ինչ գիտի: Հետևաբար մեր խնդիրը միայն գիտելիք հաղորդելը չէ, այլ նաև մտածողության հմտությունները զարգացնելը:

Իսկ ինչ կարելի է անել, որ հնարավորինս շատ բան սովորեն աշակերտները:Մասնագետները խորհուրդ են տալիս՝ նոր նյութը սովորեցնել կապակցված, ինչպես նաև օգտագործել պատմություններ: Եթե ուսուցանում ենք անջատ փաստեր, ապա աշակերտները քիչ բան կարող են սովորել:

Ուսուցչի առաջ ծառանում է ուսումնառության կազմակերպման հաջորդ կարևոր խնդիրը՝ սովորողներին ինչպես ներգրավվել ուսումնառության բուն գործընթացի մեջ:Այստեղ ավելի, քան պարզ է, որ ուսուցիչը պարտավոր է սովորողներին բացատրելու նրանց առջև առկա խնդիրները և ուսումնառության գործընթացը հարմարեցնելու նրանց հնարավորություններին:

Գիտելիքը ընկալել նշանակում է՝ սովորողի կողմից այն վերափոխել կամ ճանաչել նրա վերափոխված տարբերակը:Գիտելիքի ընկալումն այն երկար ժամանակ հիշելն է և վերարտադրելը, օրինակ, սահմանումների, փաստերի, օրենքների, հասկացությունների սահմանել կարողանալը:

Գիտելիքների, կարողությունների յուրացման կարևոր նախադրյալ է ուսուցչի կողմից իր մոտեցումներն այնպիսի ռազմավարությունների միջոցով կառուցելը, որոնք կօգնեն սովորողներին նոր ձեռքբերված գիտելիքը կապել անցածի հետ, նոր ձեռքբերված գիտելիքը դասավորել այնպես, որ այն դառնա երկարատև հիշողության մաս:Իսկ սա կարող են միայն ապահովել ուսուցման ակտիվ մեթոդները, որոնք Հասարակագիտություն առարկայի ուսուցման անփոխարինելի մեթոդներ են համարվում:

Այսպիսով, ակտիվ ուսուցման մեթոդներ նշանակում է ուսուցում գործունեության մեջ: Լ.Ս.Վիգոտսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Ակտիվ մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և

սովորողների միջև, այնպես էլ իրենց, սովորողների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում են հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը զարգանում է սովորողների խոսքը: Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է

սովորողներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել սովորողների կողմից ձեռք բերված գիտելիքները: Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայություն և այլն): Ակտիվ

մեթոդները զուգակցվում են իլյուստրատիվ մեթոդների հետ, կատարվում են մեխանիզմների, մոդելների, գծագրերի, ինչպես նաև ֆիլմերի, սլայդների, հետաքրքրիր նյութերի ցուցադրություններ։Այս ձևերը շատ են կիրառելի Հասարակագիտության դասերին։Պետք է նշեմ, որ ակտիվ մեթոդների ժամանակ սովորողներից յուրաքանչյուրն իր կարողություններով ներգրավվում է , օրինակ, խմբի աշխատանքի մեջ՝ ցուցաբերելով իր օգնությունը։

«Ինչպես սովորեցնել» հարցի պատասխանը հանգեցվում է ուսուցման մեթոդի կամ ձևի ընտրությանը։Ուսուցման ձևը կամ մեթոդը պետք է առավելագույն ձևով համապատասխանի ուսուցման տրամաբանությանը, հաշվի առնի սովորողի մոտ ուսուցման արդյունքում ձևավորված կրթական կարիքը։

Իմ կարծիքով, որպես առաջնահերթ խնդիր պետք է դրվի յուրաքանչյուր սովորողի կողմից ուսումնասիրվող նյութը հասկանալու մակարդակով յուրացնելու պարտադիր պահանջի հարցը։Ինքնըստինքյան կարևորվում է յուրացման մեխանիզմների և հասկացմանը նպաստող խնդիրների ուսումնասիրության հարցերը։Որպես հանրակրթական հիմնական պահանջ սովորողների մեջ պետք է ձևավորվեն սեփական մտքերը առավել պարզ և հասկանալի արտահայտելու կարողությունը և ուրիշների արտահայտած մտքերը ճիշտ ընկալելու ունակությունը։Այդ կարողությունների և ունակությունների ձևավորումը ևս ունի անհատական բնույթ, այսինքն գործ ունենք երեխայի կրթական կարիքի բացահայտման հետ, որը տեղի է ունենում համապատասխան իրավիճակներում։

Ես որպես Հասարակագիտության ուսուցիչ, շատ կարևորում եմ արդյունավետ ուսուցում կազմակերպելու համար օգտագործել խաղի մեթոդը։

Եթե երեխայի գործունեության առաջնային և ցանկալի ձևը համարվում է խաղը, ապա ուսուցման կազմակերպման համար պետք է օգտագործեն գործունեության այս ձևը՝ համատեղելով խաղը և ուսումնական գործընթացը, ավելի ճիշտ, օգտագործել խաղային գործունեությունը կրթական նպատակներին հասնելու

համար։ Այս դեպքում խաղի մոտիվացիոն ներուժը կուղղվի ուսումնական ծրագրի ավելի արդյունավետ իրագործմանը։ Բարձր դրական մոտիվացիան կարող է լրացնող գործոն հանդիսանալ սովորողների ոչ բավարար բարձր ունակությունների ժամանակ։ Բնական խաղային միջավայրում, որտեղ չկա պարտադրանք, և կա հնարավորություն յուրաքանչյուր երեխայի համար գտնել իր տեղը, ունենալ նախաձեռնություն և անկախություն, ազատ իրականացնելու իրենց կարողությունները և կրթական կարիքները, հանդիսանում է ուսումնական նպատակներին հասնելու օպտիմալ տարբերակ։ ԵՎ կրթական գործընթացում ուսուցման ակտիվ մեթոդների ներառումը թույլ է տալիս ստեղծել այդպիսի միջավայր՝ ինչպես դասարանում, այնպես էլ արտադպրոցական միջոցառումների ժամանակ։

Ակտիվ մեթոդները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից.

- Ուսումնական դրական խթանի ձևավորում,
- Սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացում.
- Կրթական գործընթացին սովորողների ակտիվ ներգրավում.
- Ինքնագործունեության խթանում,
- Ճանաչողական գործընթացների զարգացում - խոսք, հիշողություն, մտածողություն
- Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում,
- Ստեղծագործական մտածելակերպի զարգացում,
- Սովորողի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացում,
- Սովորողի անհատական-յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում,
- Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում։

Հասարակագիտության դասաժամերին ուսուցման նորարական մոտեցումները հնարավորություն են տալիս ուսուցչին ավելի լավ

ուսումնասիրելու և բացահայտելու սովորողների առաջընթացը, նրանց ձեռբերումները, բարելավելու քննադատական և վերլուծական մտածողության հմտությունները:

Ստեղծագործական ուսուցման մեթոդները թույլ են տալիս ուսուցչին առաջնորդել լ սովորողներին սովորել իրենց սեփական տեմպերով, մտածելու նոր ուղիներ խնդիրների լուծման համար դասագրքերում արդեն գրված պատասխանները գտնելու փոխարեն:

Սովորողին տրված միավորային գնահատականը կարող է ինչ-որ բան ասել, բայց ոչ ամեն ինչ աշակերտի ուսուցման կարողությունների և ձեռք բերած գիտելիքների մասին:Ուսուցիչը այնպես պետք է վերահսկի իր կողմից վարած դասը, որ ավելի լավ իմանա, թե իր աշակերտները ինչի հետ են պայքարում՝ գտնելու ամենահարմար լուծումները, հասկանան, թե ինչ են սովորել, ինչու են սովորել և ինչն է պակասում:Վերջինս կարևորվում է հատկապես հիմա, երբ գործածության մեջ են դրված առարկայական նոր չափորոշիչները, ըստ որի երեխայի գիտելիքները պետք է օգնեն նրան գործնականում կիրառելու դրանք, այսինքն, երեխան պիտի հասկանա, թե այս կամ այն գիտելիքը ինչի համար է իրեն պետք լինելու:

Հասարակագիտության դասավանդման գործընթացում շատ կարևոր է համագործակցային ուսուցումը, որը դասավանդման մեջ բազմազանություն է մտցնում և գործուն ու արդյունավետ ուսումնառության հնարավորություն է ընձեռում :

Կան աշակերտներ, որոնք արագ են ըմբռնում նյութը, ուսուցչի բացատրությունը, կան նաև այնպիսի աշակերտներ, որոնց ժամանակ է պետք յուրացնելու նյութը, լրացուցիչ բացատրություն ստանալու: Որպես կանոն՝ այդպիսի աշակերտները վախենում են արտահայտվելուց, հարցեր տալուց: Նման դեպքերում երեխաներին միավորում եմ համագործակցային խմբերում (3-5հոգի) և տալիս եմ նրանց ընդհանուր հանձնարարություն: Այնպիսի իրավիճակ է ստեղծվում, որ յուրաքանչյուրը պատասխանատու է

ոչ միայն իր աշխատանքի համար, այլ ամբողջ խմբի համար: Թույլ աշակերտները աշխատում են ստանալ իրենց համար անհասկանալի հարցերի պատասխանները ընկերներից: Խմբի բոլոր անդամները շահագրգռված են, որ բոլորը ըմբռնեն նյութը և կարողանան այն լավ

ներկայացնել: Այդ ճանապարհով, միասնական ուժերով պրոբլեմը լուծվում է: Աշակերտները համագործակցում են և պարտավորված են զգում իրենց ընկերների ուսումնառության համար: Յուրաքանչյուր խումբ կամ զույգ աշխատում է միասնական, համախմբված, մի մարդու նման՝ ուսուցչի կողմից իրենց տրված հանձնարարությունը կատարելու նպատակով:

Պատահական չէ, որ ուսուցչի աշխատանքը համարվում է ստեղծագործական աշխատանք, քանի որ ուսումնական գործընթացի նկատմամբ ցուցաբերում է հենց ստեղծագործական մոտեցում, յուրաքանչյուր սովորողին վերաբերվում է յուրովի՝ հաշվի առնելով նրա կրթական կարիքը, առանձնահատկությունը, որի արդյունքում էլ կազմակերպվում է դասապրոցեսը և ակնկալվում սպասված արդյունք: Իմ կարծիքով, հնարավոր չէ մի հետազոտական աշխատանքում ներկայացնել ուսումնառության ընթացքում սովորողների կրթական կարիքների բացահայտման բոլոր հնարավոր մեթոդներն ու ճանապարհները, քանի որ դրանք ժամանակի ընթացքում անընդհատ փոփոխվում և կատարելագործվում են:

Եզրակացություն

Ամփոփելով իմ հետազոտական աշխատանքը՝ ցանկանում եմ նշել հետևյալը. հանրակրթական դպրոցը պարտավոր է ապահովել սովորողների կրթության մատչելիությունն ու հասանելիությունը, իրացնելու իրենց կրթության իրավունքը:

Այսօր մենք ապրում ենք դժվար ժամանակաշրջանում,որի պայմաններում ենք ստիպված իրականացնել կրթության գործընթաց:Կրթության գործընթացի մասնակից ուսուցիչի առջև դրված են հսկայական խնդիրներ, նա կանգնած է մեծ մարտահրավերների առջև, ուսուցչի առջև ներկայացված պահանջները բազմաթիվ են և բազմաբնույթ:Ի պատիվ ուսուցչի պետք է նշեմ, որ նա պատվով է կատարում այսօր իր առաքելությունը, այո, ես չեմ վախենում ասել այդ բառը, առաքելություն, որովհետև մեր պետության վաղը ուսուցչի ձեռքերում է:

Ուսուցչի աշխատանքը հանդիսանում է ամենածանր և դժվարին պարտականությունը:Տեղին է հիշել մեծն Թումանյանի խոսքերը. «Գործիչների մեջ գուցե ամենակարևորն ու ազնիվը, և՛ ընտանիքի համար, որ զավակներն է կրթում, և՛ հասարակության համար, որ գիտակից անդամներ է պատրաստում, և՛ պետության համար, որ ազնիվ քաղաքացիներ է հասցնում, և՛ աշխարհքի համար, որ լուսավոր մարդիկ է տալի..»

Ուսուցիչը կրում է մարդկային բարձր որակներ, իմաստուն է և մարդկանց տալիս է ամենաարժեքավոր բանը՝ գիտելիք և դաստիարակություն, ինչը լույս է խավարի մեջ: Ուսուցիչը ցույց է տալիս իր աշակերտին ճիշտ ճանապարհը մարդկանց աշխարհում, բացահայտում է երեխաների համար բնության ու մարդկության զարգացման փիլիսոփայությունը,իսկ գիտելիքով զինված մարդը ամենահզոր և պաշտպանվածն է:Իսկ դրա հաջողության գրավականը ուսումնական գործընթացում երեխաների կրթական կարիքների ճիշտ ընկալումն ու գնահատումն են:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները»-Ձեռնարկ ուսուցիչների համար, Այռեքս, 2004թ.
2. «Ուսուցման արդյունավետ հնարներ»-Ս.Խաչատրյան, Երևան, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան-2020
3. «Педагогическая психология»-Выготский Л.С.